

մշեցիներուն, նոյնիսկ պարտապանաց քիւրտերուն, չքացնելով դէմքէն արժանապատուական յիմարութիւններ ու փախստեայ ապրողներու անգուճութիւնը: Խուլ ու զուսպ հաճոյքով՝ անիկա կը մտնէր նոր իր պատկերին մէջ: Ժողովուրդ: Վերջապէ՛ս:

Մինչեւ Կիլիկիոյ դաշտերը անիկա պիտի կատարելագործէր իր ուսումը: Ու պիտի հասկնար, ինչ որ մենէ քիչերուն վիճակուած է հասկնալ, - այդ արեւելքին հեռաւոր, չկասկածուած իմաստը, այնքան հակամարտ ազդեցութեանց ներքեւ չխեղդուած մարդկային տառապանքին հեղանիւթ առուակը, որ Փաքիրներով, աշուղներով, տէրվիշներով, մուրացիկներով բխումի կու գայ շեղջրւած գազանութեանց ակերէն, ու երգի մը, հեքիաթի մը, սրտառուչ բարեկամութեան մը խորհրդանշաններով մատչելի կ'ըլլայ տեսնել կրցողին: Միայն արիւնի հեղեղները չեն վազած Ասիոյ ձորակներէն: Մարդկային մռայլ ողբերգութիւնը առուակուած է երկրէ երկիր: Դէպի աշխատանք, հացին սա թիապարտները, Մաթիկէն չկասկածուած բարձրութեան մը խորհրդանիշ գեղեցկութիւնն էին՝ «գալոց օրերուն», որուն արշալոյսը հագիւ կ'ողջունւի, բայց այնքան աղաւաղ: Թշուառ մարդեր, բոլորն ալ, քրտինքին տրտմութեան մէջ, առանց հայ կամ թուրք ըլլալու: Տառապանքին մէջ մէկ, ու յոգնութեան թեւերուն՝ եղբայր իրարու: Օրերով անոնք չէին զատուեր իրենց հոգեբխումէն: Պզտիկ կռիւներ, աղօթքի գրգռութիւններ, հոգեկան սզեղութեանց բռնի ժայթքումներ. տեսա՛ւ ասոնք ընկեր Մաթիկը, բացառաբար տիրող ցեղէն առաջացող: Բայց տեսաւ նաեւ իմաստուններ, շիտակ ու քիչ մը ծուռ քանակով, որոնք խաղաղութիւն գիտէին ստեղծել արիւնի փոխան ու հացին մէջ բռնութիւնը ցոյց տալ ամէնուն աչքին:

Ժողովուրդը ունի այս տիպարները: Անոնք սրտառուչ են, երբ իշխող տարրէն կու գան, անսպասելի ըլլալուն: Տեղական իր տարազը, զոր գնած էր հիւանդութեամբ ետ դարձող աշխատաւորէ մը, անոր վրայէն կը